ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

ՀՏԴ 159.9
DOI: 10.56246/18294480-2025.18-27

ԻՍԿԱՋՅԱՆ ԱՐՄԻՆԵ
Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կիրառական հոգեբանության ամբիոնի հայցորդ
էլփոստ՝ arminiskajyan@mail.ru
ԱՎԵՏԻՍՅԱՆ ՄԱՐԻԱՆԱ
Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կիրառական հոգեբանության ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
էլփոստ՝ mariana_avetisyan@yahoo.com

Սոցիալական ցանցերը ներկայումս մարդու առօրյա կյանքի անբաժան մասն են կազմում: Մարդկանց մեծամասնությունն ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ամբողջ աշխարհում անձնական էջեր ունեն և ակտիվ մասնակցություն են ցուցաբերում տարբեր սոցիալական հարթակներում: Սա ժամանակակից թվային դարաշրջանին հատուկ ֆենոմեն է, որի վերաբերյալ, սակայն, հետազոտություններ քիչ են իրականացված:

Հոդվածում ներկայացված է դեռահասների՝ որպես սոցիալական ցանցերի ակտիվ օգտատերերի կողմից սոցիալական ցանցերի կիրառման նպատակի ուսումնասիրության մեր հետազոտությունը, որի խնդիրներն են՝ բացահայտել, թե ինչ առանձնահատկություններ ունեն սոցիալական ցանցերը, ինչ նպատակով են դրանք առավել հաճախ կիրառվում դեռահասների կողմից, և ինչը կարող է հոգեբանական կախվածության ձևավորման պատճառ հանդիսանալ այդ տարիքային փուլում:

Հետազոտությունն իրականացվել է Երևանի դպրոցներում, որին մասնակցել են 12-17 տարեկան 90 աղջիկ և 75 տղա:

Ըստ հետազոտության արդյունքների՝ սոցիալական ցանցերն ունեն որոշակի հոգեբանական առանձնահատկություններ, որոնց շնորհիվ գրավում են դեռահասներին: Հետազոտությանը մասնակցած բոլոր դեռահասները հանդիսանում են առնվազն մեկ սոցիալական ցանցի օգտատեր, իսկ շատերը (85%) գրանցված են միաժամանակ մի քանիսում: Սոցիալական ցանցերի կիրառման նպատակները տարբեր են: Ընդհանուր առմամբ աղջիկների մեծամասնությանը գրավում է նկարներով կիսվելու կամ նկարներ դիտելու

գործընթացը, իսկ տղաներին՝ խաղերն ու տեղեկատվություն ստանալը: Հետազոտությունը նաև ցույց է տալիս, որ սոցիալական ցանցերը պարունակում են մի շարք ռիսկեր, որոնցից առաջնային են վիրտուալ ծանոթություններն ու դեստրուկտիվ խաղերը:

Բանալի բառեր՝ *սոցիալական ցանցեր, հոգեբանական առանձնահատկություններ, դեռահասներ, հոգեբանական զրույց, դեստրուկտիվ խաղեր, վիրտուալ ծանոթություններ:*

Ներածություն

Թվային դարաշրջանում սոցիալական ցանցերի կիրառումը դարձել է առօրյա կյանքի անբաժան մասը՝ կտրուկ աճ գրանցելով վերջին տարիներին [9]: Սոցիալական ցանցերը կայքեր և առցանց գործիքներ են, որոնք հեշտացնում են օգտատերերի միջև հաղորդակցությունը՝ հնարավորություն տալով կիսվել տեղեկատվությամբ, կարծիքներով և հետաքրքրություններով [13]: Ավելի քան մեկ միլիարդ մարդ ներկայումս հանդիսանում է Faebook-ի ակտիվ օգտատեր, և ակնկալվում է, որ ժամանակի ընթացքում այս թիվը զգալիորեն կաճի հատկապես զարգացող երկրներում [6]:

Դեռահասների կողմից սոցիալական ցանցերի օգտագործումը վերածվել է ապրելակերպի: Վերջիններս բավական շատ ժամանակ են ծախսում սոցիալական ցանցերում, ինչը կարող է բացասական ազդեցություն թողնել հոգեկան և ֆիզիկական առողջության վրա [11]: Մասնավորապես կարող է առաջացնել դեպրեսիա, անհանգստություն, խոչընդոտել ակադեմիական առաջադիմությանը [14]: Հարկ է նշել նաև, որ սոցիալական ցանցերում առկա են որոշակի մեխանիզմներ, ինչպիսիք են հավանումները, մեկնաբանությունները, որոնք ազդում են մարդու հոգեկանի վրա: Որպեսզի անձը ստեղծի ու պահպանի իր կերպարը սոցիալական ցանցերում, պետք է շարունակաբար օգտագործի դրանք, ինչն էլ մեծացնում է կախվածություն ձեռք բերելու հավանականությունը [17]:

Մեր կողմից կատարված էմպիրիկ դիտումների արդյունքում բացահայտեցինք, որ մեծ թիվ է կազմում դեռահասության շրջանում սոցիալական ցանցերից կախվածությունը: Ուստի որոշեցինք ուսումնասիրել սոցիալական ցանցերից կախվածությանն պատճառներն ու ազդեցության առանձնահատկությունները, որպեսզի կարողանանք անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել՝ դրանց բացասական ազդեցությունը կանխարգելելու համար:

Այսպիսով, հետազոտությունն արդիական է և ունի կիրառական նշանակություն, քանի որ դեռահասների կողմից սոցիալական ցանցերի կիրառման հոգեբանական պատճառներն ուսումնասիրված չեն ՀՀ-ում:

Հետազոտության հիմնախնդիրը, նպատակը, խնդիրները, մեթոդները, բազան:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերը: Մեր հետազոտության մեթոդաբանական հիմք են հանդիսացել Ջ. Ռիվայի, Ն. Ս. Կրամերի, Ս. Վինթերի, Ա. Մասլոուի, Է. Ֆրոմի, է. էրիկսոնի և այլոց տեսություններն ու հայեցակարգերը:

Ըստ պրոֆ. Ջ. Ռիվայի՝ վերջին տասնամյակի ընթացքում ՀԼՄ-ները կտրուկ փոփոխության են ենթարկվել. հեռուստատեսությունից և ռադիոյից, որտեղ տեղեկատվության փոխանցումը տեղի էր ունենում միակողմանիորեն, անցում է կատարվել դեպի սոցիալական մեդիա կամ ինտերակտիվ մեդիա, որն աննախադեպ հնարավորություններ է ընձեռում օգտատերերին հանդես գալու որպես մեդիա ստեղծող և կիրառող [15]:

Սոցիալական ցանցերին բնորոշ առանձնահատկություններից է ֆիզիկական շփման բացակայությունը: Եթե առերես շփման դեպքում մարդու դեմքի արտահայտությունը կամ ժեստերը որոշակի տեղեկատվություն են փոխանցում զրուցակցին, ապա օնլայն շփման դեպքում այս հնարավորությունը բացակայում է: Ըստ հոգեբաններ Ն. Ս. Կրամերի և Ս. Վինթերի՝ անձը կարող է ներկայացնել ինքն իրեն «ռազմավարական ձևով»՝ ստեղծելով ուրիշներին ներկայանալու համար ցանկալի պատկեր [7]:

Այնուամենայնիվ, սոցիալական ցանցերը նաև հնարավորություն են տալիս այլ օգտատերերի ներազդել անձի սոցիալական ինքնության ձևավորմանը՝ մեկնաբանություններ գրել նկարների վրա նշելու միջոցով, որը կարող է, ըստ հետազոտող Մ. Մադդենի, անկանխատեսելի փոփոխություններ առաջացնել սոցիալական ինքնության կայացման հարցում [10]:

Սոցիալական ցանցերի մեկ այլ առանձնահատկություն է այն փաստը, որ անձը կարող է գրանցվել բազմաթիվ տարբեր սոցիալական ցանցերում՝ օգտագործելով դրանք տարբեր նպատակների համար: Ըստ էության, մասնակցությունը տարբեր սոցիալական ցանցերում և ընտրությունը, թե որտեղ ինչ հրապարակել, ինչպես նշում է հոգեբան Դ. Սմիթը, դառնում է սոցիալական ինքնության կառավարման առաջադեմ ձև, որը կարելի է անվանել «անձնական բրենդինգ» [16]: Այս առանձնահատկության շնորհիվ օգտատերերը կարող են բարձրացնել իրենց վարկանիշը:

Ըստ Մասլոուի՝ մարդն ունի հիմնական պահանջմունքներ, որոնք ըստ կարևորության դասավորել է բուրգի ձևով՝ ֆիզիոլոգիական պահանջմունքներից մինչև ինքնաիրականացման (ինքնադրսևորման) պահանջմունքներ [12]: Սոցիալական ցանցերը կարող են բավարարել անվտանգության, սիրո, պատկանելության և ինքնադրսևորման պահանջմունքները, որոնք էլ կարող են հանգեցնել սոցիալական ցանցերից կախվածության ձևավորման, քանի որ անձը նշված

պահանջմունքները բավարարում է հենց վիրտուալ հարթակներում:

Ադիկտիվ վարքը կախվածություն է գործողությունից կամ նյութից: Վարքային ադիկցիաները նման են ալկոհոլից կամ թմրամիջոցներից կախվածության, սակայն տարբերությունն այն է, որ անհատը կախվածություն չունի որևէ նյութից: Դրա փոխարեն անհատը կախվածություն ունի վարքից կամ այն զգացողությունից, որն առաջանում է տվյալ վարքը դրսևորելու արդյունքում [4]: Սոցիալական ցանցերից կախվածությունը իրենից ներկայացնում է վարքային կախվածություն, որը բնութագրվում է սոցիալական ցանցեր մուտք գործելու և օգտագործելու անկառավարելի ցանկությամբ: Անձն այնքան ժամանակ և ջանք է հատկացնում սոցիալական ցանցերին, որ դա խաթարում է կյանքի այլ կարևոր ոլորտները [5]:

Ըստ Է. Ֆրոմի՝ մարդկային պահանջմունքներից մեկը միայնությունից ազատվելը, օտարացվածության հաղթահարումն է, որը ձեռք է բերվում ադիկտիվ վարքի միջոցով [3]: Սոցիալական ցանցերը հաճախ օգտագործվում են ձանձրույթը մեղմելու և սոցիալական կապեր հաստատելու համար, որը ևս կարող է կախվածության ձևավորման պատճառ դառնալ [8]:

Է. Էրիկսոնը իր հոգեսոցիալական զարգացման տեսության մեջ գրում է, որ դեռահասության ճգնաժամի ընթացքում տեղի է ունենում անձի նույնացում, երբ դեռահասը ստեղծում է իդեալներ: Եթե դեռահասը չի կարողանում իր տեղը գտնել կյանքում սեռական, էթնիկական և դերային նույնացման նկատմամբ կասկածների հետևանքով, ապա կարող է առաջանալ հուսահատություն, որն էլ հանգեցնի ադիկտիվ վարքի [2]:

Ուստի անհրաժեշտ է ուսումնասիրել հատկապես դեռահասների կողմից սոցիալական ցանցերի լայնածավալ օգտագործման միտումները, քանի որ այս շրջանը առանցքային է անձի հոգեբանական զարգացման համար: Սոցիալական ցանցերը նրանց կարող են առավել խոցելի դարձնել արտաքին ազդեցությունների նկատմամբ:

Հետազոտության կազմակերպումը և մեթոդիկան

Հետազոտությունն անց է կացվել Երևանի թիվ 79 հիմնական և թիվ 115 ավագ դպրոցներում, որին մասնակցել են 12-17 տարեկան 165 դեռահաս՝ 90 աղջիկ, 75 տղա:

Կիրառվել է հոգեբանական զրույցի մեթոդը: Այս մեթոդը լայնորեն օգտագործվում է հոգեբանական հետազոտությունների ընթացքում: Նպատակը հետազոտվողների բանավոր խոսքի միջոցով օբյեկտիվ կամ սուբյեկտիվ փաստերի մասին տեղեկատվություն ստանալն է [7]:

Հետազոտվողները պատասխանել են հետևյալ հարցերին.

1. «Ո՞ր սոցիալական ցանցերում եք գրանցած». հարցի նպատակն է պարզել, թե հատկապես որ սոցիալական ցանցերն են նպաստում կախվածության ձևավորմանը: Սոցիալական ցանցերից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները, որոնք գրավում են լսարանի ուշադրությունը: Այդ պատճառով էլ հարկ ենք համարել հասկանալ, թե որոնք են առավել տարածված:
2. «Ի՞նչ նպատակով եք օգտագործում սոցիալական ցանցերը». հարցի նպատակը այս դեպքում պարզ է. պարզել, թե որոնք են հետազոտվող տարիքային խմբում սոցիալական ցանցերի կիրառման նպատակները:
3. «Երբևէ նամակներ ստացե՞լ եք անծանոթներից». հարցի նպատակն է պարզել, թե արդյոք անծանոթները փորձու՞մ են շփման մեջ մտնել դեռահասների հետ, քանի որ անծանոթների հետ շփումը իրենից որոշակի վտանգ է ներկայացնում և կարող է հանգեցնել բացասական հետևանքների:
4. «Եթե նախորդ հարցին պատասխանել եք «Այո», ապա ի՞նչ բովանդակություն են ունեցել նամակները». հարցը նպատակ է հետապնդում հասկանալ, թե հատկապես ինչ ռիսկեր են առկա:
5. «Կցանկանայի՞ք հանդիպել Ձեր օնլայն ընկերներին իրականում». հարցը նպատակ ունի պարզել, թե արդյոք հետազոտվողներն ունե՞ն օնլայն ընկերներ և արդյոք վիրտուալ շփման ռիսկը կարո՞ղ է տեղափոխվել իրական աշխարհ:
6. «Ի՞նչ խաղեր եք խաղում սոցիալական ցանցերում». հարցի նպատակն է առանձնացնել այն խաղերը, որոնք առավել տարածված են դեռահասների շրջանում և պարզել, թե արդյոք այդ խաղերը կարող են նպաստել կախվածության կամ բացասական վարքի ձևավորման:

Հետազոտության արդյունքների վերլուծություն

Ներկայացնենք հոգեբանական զրույցի արդյունքները աղյուսակի տեսքով:

Աղյուսակ 1.

Հոգեբանական զրույցի արդյունքների աղյուսակային արտահայտվածությունը:

Հարց	Պատասխան	Աղջիկներ	Տղաներ
1. Ո՞ր սոցիալական ցանցերում եք գրանցած:	Instagram	84%	73%
	YouTube	46%	82%
	Facebook	42%	78%
	WhatsApp	36%	58%
	Telegram	26%	22%
	Snapchat	19%	8%
	Այլ	4%	7%

2. Ի՞նչ նպատակով եք օգտագործում սոցիալական ցանցերը:	Ընկերների և բարեկամների հետ շփվելու նպատակով	72%	82%
	Տեղեկատվություն ստալանու նպատակով	64%	74%
	Նկարներ դիտելու և տեղադրելու նպատակով	78%	31%
	Խաղեր խաղալու նպատակով	8%	67%
	Այլ	2%	5%
3. Երբևէ նամակներ ստացե՞լ եք անծանոթներից:	Այո	83%	54%
	Ոչ	17%	46%
4. Եթե նախորդ հարցին պատասխանել եք «Այո», ապա ի՞նչ բովանդակություն են ունեցել նամակները:	Ծանոթության առաջարկ	74%	35%
	Որևէ խաղի մասնակցելու առաջարկ	7%	44%
	Գումար փոխանցելու խնդրանք	5%	13%
	Անհասկանալի բովանդակությամբ նյութ կամ հղում	28%	35%
	Ոչ պատշաճ բովանդակության նկար/տեսանյութ	3%	8%
5. Կցանկանայի՞ք հանդիպել Ձեր օնլայն ընկերներին իրականում:	Այո՛, շատ կցանկանայի հանդիպել	7%	36%
	Ունեմ օնլայն ընկերներ, բայց չէի գնա հանդիպման	26%	21%
	Չունեմ օնլայն ընկերներ	67%	43%
6. Ի՞նչ խաղեր եք խաղում սոցիալական ցանցերում:	PUBG Mobile	2%	36%
	Hero Wars	0%	11%
	Texas HoldEm Poker	0%	7%
	FarmVille 2	24%	1%
	Candy Crush Saga	11%	3%
	Չեն խաղում որևէ խաղ	63%	36%

Ինչպես ցույց է տալիս Աղյուսակ 1-ը, առաջատար սոցիալական ցանցերն են Instagram-ը, YouTube-ը, Facebook-ը, WhatsApp-ը, Telegram-ը և Snapchat-ը: Ուսումնասիրելով նշված հարթակների բնույթը՝ պարզեցինք, որ դրանք ունեն առանձնահատկություններ, որի շնորհիվ գրավում են որոշակի թիրախային լսարան: Մասնավորապես Instagram-ը նկարներով և տեսանյութերով կիսվելու անվճար, սմարթֆոնների համար հարմարեցված հարթակ է, ունի պարզ կիրառելիություն և դիզայն: Պատահական չէ, որ հետազոտությանը մասնակցած

աղջիկների 84%-ը օգտագործում է Instagram-ը: Սա ցույց է տալիս, որ աղջիկներին դուր է գալիս կիսվել իրենց լուսանկարներով ու տեսանյութերով կամ դիտել ուրիշներինը: Տղաների մեծամասնությունը՝ 73%-ը, ևս գրանցված է Instagram-ում, սակայն այս ցուցանիշը 11%-ով պակաս է աղջիկների ցուցանիշից (Գծապատկեր 1):

Տղաների մեծամասնությունը նախընտրում է YouTube-ը: YouTube-ում հասնելի են հսկայական քանակությամբ տեսանյութեր տարաբնույթ թեմաներով: Օգտատերերը կարող են ստանալ իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները, զբաղվել ինքնակրթությամբ, դիտել ժամանցային տեսնյութեր, մեկնաբանություններ գրել կամ ներբեռնել իրենց սեփականը, որը շատ դիտումներ ունենալու դեպքում կարող է վերածվել եկամտի աղբյուրի: YouTube-ի այս առանձնահատկություններն էլ գրավում են տղաների ուշադրությունը: Հաջորդ լայն տարածում ունեցող հարթակը Facebook-ն է, որի առաջնային նպատակը մարդկանց՝ միմյանց հետ կապ հաստատելն է, նաև տարաբնույթ տեղեկատվական և բիզնես հարթակ է: Տղաների 78%-ն օգտվում է Facebook-ից, հետևաբար կարող ենք նշել, որ տղաներին գրավում է այլ անձանց հետ շփումը կամ ֆեյսբուքյան էջերի ակտիվությանը հետևելը: Այս մասին է վկայում նաև WhatsApp-ի ցուցանիշները՝ տղաները 22%-ով ավելի շատ են գրանցված WhatsApp-ում, քան աղջիկները (Գծապատկեր 1): Նշենք նաև, որ WhatsApp-ը նամակագրության համար նախատեսված հարթակ է:

Գծապատկեր 1.

Ամենատարածված սոցիալական ցանցերը դեռահասների շրջանում:



2-րդ՝ «Ի՞նչ նպատակով եք օգտագործում սոցիալական ցանցերը» հարցին տղաների մեծամասնությունը պատասխանել է «Ընկերների և բարեկամների հետ շփվելու նպատակով», իսկ երկրորդ տեղում տեղեկատվություն ստալանու

նպատակն է: Այս փաստը ևս ցույց է տալիս, թե ինչու են տղաները նախընտրում YouTube-ը, Facebook-ն ու WhatsApp-ը: Աղջիկների մեծամասնությունը նշել է, որ սոցիալական ցանցերի կիրառման նպատակը նկարներ դիտելն ու տեղադրելն է: Այս փաստը հաստատում է նախորդ հարցի ենթադրությունը, որ Instagram-ի բարձր կիրառելիությունը կապված է աղջիկների կողմից վիզուալ հետաքրքրվածության հետ:

«Երբևէ նամակներ ստացե՞լ եք անծանոթներից» հարցին տրված պատասխաններից պարզ է դառնում, որ անծանոթները նախընտրում են գրել աղջիկներին. աղջիկների 83%-ը ստացել է նամակներ անծանոթներից, որը տղաների ցուցանիշից բարձր է 29%-ով:

Աղջիկների դեպքում առաջնային վտանգը ծանոթություններն են, քանի որ մեծամասնություն է նշել է, որ ստացել է ծանոթության առաջարկ: Տղաների մեծամասնությունը, ի տարբերություն աղջիկների, ստացել է խաղերի մասնակցելու առաջարկություններ: Այս դեպքում ռիսկը խաղային կախվածության ձևավորումն է կամ վտանգավոր խաղերին մասնակցություն ունենալը:

«Կցանկանայի՞ք հանդիպել Ձեր օնլայն ընկերներին իրականում» հարցի արդյունքները ցույց են տալիս, որ տղաների մեծամասնությունն ունի վիրտուալ ընկերներ և 36%-ն ունի ցանկություն իրականում շփվելու: Աղջիկների մեծամասնությունը, սակայն, նշել է, որ չունի որևէ օնլայն ընկեր և ի տարբերություն տղաների՝ միայն 7%-ն է ցանկանում իրականում հանդիպել:

Եզրակացություն

Ընդհանրացնելով կատարված հետազոտության ընթացքում ձեռք բերված տեղեկությունները՝ եկանք հետևյալ եզրահանգումներին.

Հետազոտությանը մասնակցած բոլորը դեռահասներն օգտվում են սոցիալական ցանցերից, ընդ որում գրանցված են առնվազն մեկ սոցիալական ցանցում, իսկ շուրջ 85%-անձնական էջ ունի երեք և ավելի սոցիալական ցանցում: Այսինքն՝ սոցիալական ցանցերը ներկայումս խիստ տարածված են ու կիրառելի:

Հետազոտության արդյունքում բացահայտեցինք դրանց կիրառման հիմնական նպատակները: Մասնավորապես աղջիկներին ամենաշատը գրավում է նկարներով կիսվելու կամ նկարներ դիտելու գործընթացը, իսկ տղաներին՝ խաղեր խաղալն ու տեղեկատվություն ստանալը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սոցիալական ցանցերը թույլ են տալիս կիսվել նկարներով, տեղեկատվություն ստանալ կամ փոխանցել, նամակագրություն վարել, խաղեր խաղալ, ինչպես նաև ստանալ հավանումներ, մեկնաբանություններ գրել, ձեռք բերել նոր հետևորդներ, իսկ կատարված հետազոտությունը ցույց է տալիս, որ դեռահասներին գրավում են նշված

հնարավորությունները, պատահական չէ, որ դրանք հոգեբանական կախվածության ձևավորման պատճառ են դառնում այս տարիքային փուլում:

Հետազոտության արդյունքում պարզեցինք նաև, որ սոցիալական ցանցերը մի շարք ռիսկեր են պարունակում դեռահասների համար, որոնցից առաջնայինը վիրտուալ ծանոթություններն են: Դեռահասներն ունեն օնլայն ընկերներ, և վտանգը, հնարավոր է, տեղափոխվի վիրտուալից իրական աշխարհ: Տղաների դեպքում առկա է խաղային կախվածության ձևավորման ռիսկ, որը կարող է հանգեցնել դեստրուկտիվ վարքի ձևավորման, քանի որ նախընտրելի խաղերն իրենց մեջ պարունակում են ագրեսիվ գործողություններ, ընդ որում ամենատարածվածը մարտախաղերն են:

Այսպիսով, հետազոտության արդյունքում բացահայտված սոցիալական ցանցերի առանձնահատկություններն ու դեռահասների կողմից դրանց օգտագործման հիմնական պատճառները թույլ են տալիս հասկանալու, թե ինչ կանխարգելիչ միջոցներ կարելի է ձեռնարկել: Մասնավերապես հոդվածն օգտակար է հոգեբանների, ուսուցիչների և ծնողների համար: Անհրաժեշտ է դեռահասներին ծանոթացնել սոցիալական ցանցերից անվտանգ օգտվելու կանոններին, տեղեկացնել հնարավոր վտանգների մասին, խրախուսել ոչ օնլայն կյանքը՝ աջակցելով որևէ հոբբիով, սպորտով կամ կամավորական աշխատանքներով զբաղվելու մեջ: Սոցիալական ցանցերից կանխարգելմանը կանդրադառնանք առանձին հետազոտությամբ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Дружинин В. Н., Психология, СПб, Питер, 2001. с. 484.
2. Эриксон Э., Психосоциальное развитие личности, М., Просвещение, 1995. С. 28-69.
3. Фромм Э., Бегство от свободы/Человек для себя, Минск. 2000. 672 с.
4. American Addiction Centers. (2024). Behavioral Addictions: Signs, Symptoms, and Treatment Options. https://americanaddictioncenters.org/behavioral-addictions
5. Addiction Center. (2024). Social Media Addiction. https://www.addictioncenter.com/behavioral-addictions/social-media-addiction/
6. Khalaf, A. M., Alubied, A. A., Khalaf, A. M., & Rifaey, A. A. (2023). The Impact of Social Media on the Mental Health of Adolescents and Young Adults: A Systematic Review. Cureus, 15(8), e42990. https://doi.org/10.7759/cureus.42990

7. Krämer, N. C., & Winter, S. (2008). Impression Management 2.0. Journal of Media Psychology: Theories, Methods, and Applications, 20(3), 106-116.
8. Stockdale, L. A., Coyne, S. M. (2020). Bored and online: Reasons for using social media, problematic social networking site use, and behavioral outcomes across the transition from adolescence to emerging adulthood. Journal of Adolescence, 79(1), 173–183. https://doi.org/10.1016/j.adolescence.2020.01.010
9. Leong, L-Y., Hew, T-S., Ooi, K-B., Lee, V-H., Hew, J-J. (2019). A hybrid SEM-neural network analysis of social media addiction. Expert Systems with Applications, 133, 296–316. https://doi.org/10.1016/j.eswa.2019.05.024
10. Madden, M. (2012). Privacy management on social media sites. Pew Internet Report, 1-20.
11. Masoed, E. S., Reda, A. R., Omar, T., Nagaty, A., Magd, A. E., & Elashry, R. S. (2021). Social media addiction among adolescents: Its relationship to sleep quality and life satisfaction. International Journal of Research in Paediatric Nursing, 3(1), 69-78. https://doi.org/10.33545/26641291.2021.v3.i1b.59
12. Maslow, A. H. (1954). Motivation and Personality. New York: Harper & Row Publishers.
13. Ostic, D., Qalati, S. A., Barbosa, B., Shah, S. M. M., Galvan, V. E., Herzallah, A. M., & Liu, F. (2021). Effects of social media use on psychological well-being: a mediated model. Frontiers in Psychology, 12, 678766. https://doi.org/10.3389/fpsyg.2021.678766
14. Purificacion, A. J., Vallespin, M. R. (2024). Understanding the Multifaceted Impacts of Social Media Addiction on Minors: A Comprehensive Analysis of Psychological, Behavioral, and Physiological Dimensions. International Journal of Current Science Research and Review, 7(5), 2559-2569. https://doi.org/10.47191/ijcsrr/V7-i5-20
15. Riva, G., & Galimberti, C. (1998). Computer-mediated communication: identity and social interaction in an electronic environment. Genetic, Social and General Psychology Monographs, 124(4), 434-464.
16. Smith, D. (2009). Personal branding. Success at last. Health Service Journal, 119(6141), 24-25.
17. Zhang, W. (2024). An Analysis of Social Media Addiction in Adolescents. Lecture Notes in Education Psychology and Public Media, 52(1), 87-91. https://doi.org/10.54254/2753-7048/52/20241537

PURPOSES OF SOCIAL NETWORK USE BY TEENAGERS

ISKAJYAN ARMINE
PhD student at the Chair of Applied Psychology, ASPU
e-mail: arminiskajyan@mail.ru
AVETISYAN MARIANA
PhD, Associate Professor, Head of the Chair of Applied Psychology, ASPU
e-mail: mariana_avetisyan@yahoo.com

Social networks are currently an integral part of a person's daily life. The majority of people, both in the Republic of Armenia and worldwide, have personal pages and actively engage with various social platforms. This phenomenon is specific to the modern digital age, yet there is limited research on the subject.

The purpose of the article is to reveal what features social networks have, for what purpose they are used by teenagers and what causes the formation of psychological dependence.

As teenagers are particularly active users of social networks, the research was conducted in schools in Yerevan, with the participation of 90 girls and 75 boys aged 12-17 years.

According to the results of the research, social networks have certain psychological characteristics, due to which they attract teenagers. All teenagers participating in the research are users of at least one social network, and many (85%) are registered in several at the same time. The purposes of using social networks are different. In general, most girls are attracted to the process of sharing pictures or viewing pictures, while boys are attracted to playing games and getting information. The research also shows that social networks contain a number of risks, among which virtual dating and destructive games are foremost.

Keywords: *social networks, psychological characteristics, teenagers, psychological interviews, destructive games, virtual dating.*

ЦЕЛИ ИСПОЛЬЗОВАНИЯ СОЦИАЛЬНЫХ СЕТЕЙ ПОДРОСТКАМИ

ИСКАДЖЯН АРМИНЕ
Соискатель кафедры прикладной психологии АГПУ
электронная почта: arminiskajyan@mail.ru
АВЕТИСЯН МАРИАНА
Кандидат психологических наук, доцент,

заведующий кафедрой прикладной психологии АГПУ
электронная почта: mariana_avetisyan@yahoo.com

Социальные сети в настоящее время являются неотъемлемой частью повседневной жизни человека. Большинство людей как в РА, так и во всем мире имеют личные страницы и активно пользуются различными социальными платформами, поддерживая онлайн-коммуникацию. Однако, несмотря на повсеместное распространение этого явления, его психологические и социальные аспекты остаются недостаточно изученными.

Цель данной статьи — выявить ключевые особенности социальных сетей, определить основные мотивы их использования подростками, а также проанализировать факторы, способствующие формированию психологической зависимости.

Поскольку особенно активными пользователями социальных сетей являются подростки, исследование было проведено среди учащихся ереванских школ. В опросе приняли участие 90 девочек и 75 мальчиков в возрасте 12-17 лет. Согласно результатам исследования, социальные сети обладают определенными психологическими особенностями, благодаря которым они привлекают подростков. Все подростки, принявшие участие в исследовании, являются пользователями хотя бы одной социальной сети, при этом 85% из них зарегистрированы в нескольких соцсетях одновременно. Цели использования социальных сетей разные. В целом, большинство девочек привлекает процесс обмена фотографиями или просмотр изображений, тогда как мальчиков привлекают игры и получение информации. Исследование также показывает, что социальные сети таят в себе ряд рисков, где на первом месте - это виртуальные знакомства и деструктивные игры.

***Ключевые слова**: социальные сети, психологические особенности, подростки, психологическая беседа, деструктивные игры, виртуальные знакомства.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 10.01.2025թ.:
Հոդվածը գրախոսվել է 25.01.2025թ.:
Ընդունվել է տպագրության 25.04.2025թ.: